# ՀԱՄԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ ՊԼԵՆՈՒՄԻ

# ԲԱՆԱՁԵՎԵՐԸ

21—25 դեկտեմբերի, 1935 թ.

ЗКП2
2-22

ԱԴՐԿՈՒՍՀՐԱՏ
ԲԱԳՈՒ — 1936

3КП2
Z-22
Կր.
23 SEP 2006
1 DEC 2009
1003
39366
4019

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

# ՀԱՄԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ ՊԼԵՆՈՒՄԻ ԲԱՆԱՁԵՎԵՐԸ

21–25 դեկտեմբերի 1935 թ.

---

1. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՍՏԱԽԱՆՈՎՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ:

Համկոմկուսի (բ) Կենտկոմի պլենումի բանաձևը՝ ընկ. ընկ. Օրջոնիկիձեյի, Լյուբիմովի, Միկոյանի, Լոբովի և Լ. Մ. Կագանովիչի զեկուցումների առթիվ, ընդունված 1935 թ. դեկտեմբերի 25-ին:

2. ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ:

Համկոմկուսի (բ) Կենտկոմի պլենումի բանաձևը՝ ընկ. Յեժովի զեկուցման առթիվ, ընդունված 1935 թվի դեկտ. 25-ին.

ՀՍԽՀ-ССР
им. А. Мясникян

ԱԴՐԿՈՒՍՀՐԱՏ
ԲԱԳՈՒ — 1936

18 SEP 2013

7006

Հայերենը թարգմանեց Ս. Տախունի
Տեխ. խմբագիր—Ն. Թառայանց

Главлит № 15
Заказ № 32
Азпартиздат № 14
Ст. формат 72x105—32.
Кол. печ. лист. 2¾.
Печ знаков 81400
Тираж—2200

Тип. „11 Интернационал“ Бакполиграфа Баку. ул. Саратовца-Ефимова № 29.

# ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՍՏԱԽԱՆՈՎՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

## ՀԱՄԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ ՊԼԵՆՈՒՄԻ ԲԱՆԱՁԵՎԸ՝ ԸՆԿ. ԸՆԿ. ՕՐՋՈՆԻԿԻՁԵՅԻ, ԼՅՈՒԲԻՄՈՎԻ, ՄԻԿՈՅԱՆԻ, ԼՕԲՈՎԻ ՅԵՎ Լ. Մ. ԿԱԳԱՆՈՎԻՉԻ ԶԵԿՈՒՅՑՈՒՄՆԵՐԻ ԱՌԹԻՎ, ԸՆԴՈՒՆՎԱԾ 1935 ԹՎԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ

Առաջին և յերկրորդ հնգամյակների պլանի հաղթական իրականացումն ապահովեց ժողովրդական տնտեսության վողջ տեխնիկական բազայի վերելքը նոր, բարձրագույն աստիճանի: Շնորհիվ յերկրի ինդուստրացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման ճիշտ քաղաքականության, վոր անցկացվեց դասակարգային թշնամիների և կուսակցության ներսում ու բանվոր դասակարգի մեջ նրանց գործակալության դեմ մղած պայքարում, խորհրդային յերկիրը տեխնիկապես վերազինվեց և ժողովրդական տնտեսությունը վերակազմակերպվեց սոցիալիստական էկոնոմիկայի հիման վրա:

Կուսակցության և պետության մեծագույն ջանքերով, բանվոր դասակարգի հերոսական պայքարով, ամբողջ յերկրի ջանքերով, կարճ ժամկետում ստեղծված է սոցիալիստական հզոր ծանր արդյունաբերություն, վորը սարքավորված է տեխնիկայի վերջին

խոսքի համեմատ և դարձել է ամբողջ ժողովրդական տնտեսության վերակառուցման բազան:

Ստեղծված է մեքենաշինական և հումքային բազա՝ թեթև արդյունաբերության արագ աճման և այն նոր տեխնիկական բազայի վրա վերակառուցելու համար:

Սննդարդյունաբերական տնայնագործական մանր և մի քանի խոշոր ձեռնարկությունների փոխարեն ըստեղծված է ամբողջ ԽՍՀՄ միացյալ սննդարդյունաբերական ինդուստրիա:

Տնայնագործական վարձակալական անտառամշակությունների փոխարեն, ստեղծված է խոշոր միացյալ անտառային արդյունաբերություն:

Երկաթուղային տրանսպորտը, վորը հետ էր մնում ժողովրդական տնտեսության աճող կարիքների բավարարման գործում, արագորեն բարձրանում է վեր և տեխնիկապես վերազինվում է:

Այս բոլոր փաստերը՝ կապիտալիստական վերջին դասակարգի—կուլակության և շահագործող դասակարգերի մնացորդների վերացման, խորհրդային երկրում շահագործումը վոչնչացնելու և աշխատանքը պատվի, փառքի, արիության ու հերոսության գործ դարձնելու, բանվորների նյութական դրությունն արմատապես բարելավելու, նրանց քաղաքական գիտակցության ու ակտիվության աճման հետ միասին հասցրին մեր երկրում ստախանովյան շարժման բուռն զարգացմանը:

Ստախանովյան շարժումը մեր ամբողջ զարգացման արդյունքն է դեպի սոցիալիզմ տանող ուղիներում, սոցիալիզմի հաղթանակի արդյունքն է մեր երկրում:

Ստախանովյան շարժումը նշանակում է աշխատանքի կազմակերպում՝ նոր ձևով, տեխնոլոգիական պրոցեսների ռացիոնալացում, աշխատանքի ճիշտ բաժանում արտադրության մեջ, վորակյալ բանվորների



ազատում՝ երկրորդական նախապատրաստական աշխատանքից, բանվորական տեղի լավագույն կազմակերպում, աշխատանքի արտադրողականության արագ աճման ապահովում, բանվորների ու ծառայողների աշխատավարձի զգալի աճման ապահովում:

Ստախանովյան շարժումը բարձրացնում է բանվոր դասակարգի կուլտուր—տեխնիկական մակարդակը, փշրում է հին տեխնիկական նորմաները, մի շարք դեպքերում գերազանցում է առաջավոր կապիտալիստական երկրների աշխատանքի արտադրողականությանը, ապահովում է սպառման առարկաների արտադրության արագ աճը և նրանց էժանացումը, ապահովում է մեր երկիրն ամենաունևոր երկիրը դարձնելը և այդպիսով ամրացնում է սոցիալիզմի դիրքերը համաշխարհային մասշտաբով:

Կապիտալիստական երկրներում աշխատանքի արտադրողականության լուրջ աճն անպայման առաջ կբերեր զբաղված բանվորների թվի կրճատում, աշխատավարձի անկում, գործազրկության աճ, աղքատության աճ, վորովհետև կապիտալիզմը չի կարող չկաշկանդել երկրի արտադրողական ուժերը: ԽՍՀՄ—ում ընդհակառակը, աշխատանքի արտադրողականության բուռն աճը պարտադիր կերպով տանում է դեպի արտադրության ֆրոնտի ընդարձակում, դեպի գործող ստանոկների ու ագրեգատների քանակի ավելացում և, հետևապես, դեպի զբաղված բանվորների քանակի աճը, դեպի նրանց աշխատավարձի աճը, վորովհետև խորհրդային հասարակակարգը, ազատելով արտադրողական ուժերը կապիտալիստական կապանքներից, չի կարող չտանել դեպի նրանց հարաճուն զարգացումը:

Կապիտալիստական երկրներում աշխատանքի արտադրողականության լուրջ աճը բուրժուազիայի համար կստեղծեր ամենավտանգավոր դժվարություններ, վորովհետև նա կհասցներ նախ՝ արտադրանքի

բուռն աճին, վորը վտանգավոր է ճգնաժամի պայմաններում, նա կհասցներ, յերկրորդ՝ սպառման առարկաների եժանացման, վորը նույնպես վտանգավոր է կապիտալիզմի համար, վորովհետև ժամանակակից կապիտալիզմը գերադասում է ապրանքները վաճառել մոնոպոլ գներով: Խորհրդային Միությունում, ընդհակառակը, աշխատանքի արտադրողականության բուռն աճը, արտադրանքի աճն ու նրա եժանացումը վտանգ չեն հանդիսանում, այլ մեծագույն նվաճում, վորը տանում է դեպի սպառման առարկաների առատություն, դեպի նրանց եժանացում և դեպի ռեալ աշխատավարձի աճը, վորովհետև խորհրդային հասարակակարգը չգիտե ճգնաժամեր, նա չի ընդունում մոնոպոլ գները և իրեն տնտեսական նպատակ է դնում վոչ թե մասնավոր անձանց համար բարձր օգուտներ ձեռք բերելը, այլ աշխատավորների նյութական դրության անշեղ վերելքը, աշխատավորներ, վորոնք ամբողջ ժողովրդական տնտեսության հիմնական և ամենաարժեքավոր ուժն են հանդիսանում:

Արդյունաբերության ու տրանսպորտի մի քանի տնտեսավարներ ստախանովյան շարժման իմաստը չեն հասկացել և գերի յեն մնացել մեր ձեռնարկությունների իջեցված նախագծային կարողություններին, կարողություններ, վորոնք իր ժամանակին հաշվի յեն առնված յեղել նկատի ունենալով մեր բանվորների ու տեխնիկական կադրերի հետամնացությունը: Հենց այդ փաստը՝ իջեցված նախագծային կարողություններին հասնելու առթիվ առաջացած ինքնաբավարարվածության հետ միասին, հասցրեց այնտեղ, վոր մի քանի աչքի ընկնող և անցյալում յերկրի ինդուստրացման ասպարեզում անտարակույս ծառայություններ ունեցող տնտեսավարներ վոչ միայն չկարողացան գլխավորել ստախանովյան շարժումը, այլ նույնիսկ նրան արգելակ դարձան:



Բացի դրանից, ինժեներա — տեխնիկական աշխատանքի աշխատողների շարքերում առաջադիմական տարրերի հետ միասին կա ինժեներների ու տեխնիկների մի մաս՝ դաստիարակված կապիտալիստական արտադրության փորձի հիման վրա և իր զգալի մասով դաստիարակված նախահեղափոխական ռուսական արդյունաբերության հետամնաց տեխնիկայի հիման վրա, վորն առաջին ետապներում ստախանովյան շարժման պոչում մնաց:

Այս հանգամանքները դժվարացնում են ստախանովյան շարժման ծավալումը:

Խնդիրն այն է, վորպեսզի օգտվելով գիտական բոլոր գիտելիքներով ու արդյունաբերության կուտակած տեխնիկական փորձից՝ հրաժարվել տեխնիկան թերօգտագործումից, վորն անխուսափելի յե կապիտալիստական հասարակության մեջ, վորտեղ բանվորըն աշխատում է վոչ թե իր, վոչ թե կոլեկտիվի համար, այլ կապիտալիստի համար, վորտեղ տնտեսությունը զարգանում է վոչ թե պլանով, ամբողջ ժողովրդի օգտին, այլ տարերայնորեն, առանձին կապիտալիստների օգտին, գնալ ստախանովյան շարժման հետ համընթաց, գլխավորել այն ու օգնել նրան, ստեղծելու աշխատանքի նոր, կապիտալիզմի համեմատությամբ բարձրագույն արտադրողականություն:

Անհրաժեշտ է ամենից առաջ փշրել արդյունաբերության բոլոր ճյուղերի ու տրանսպորտի տնտեսավարների և ինժեներա — տեխնիկական աշխատողների պահպանողական մասի կողմից ստախանովյան շարժման դեմ մնացած ընդդիմադրությունը և, յերկրորդ՝ ամեն կերպ օգնել այդ շարժումը գլխավորելու այն տնտեսավարներին, ինժեներներին ու տեխնիկներին, վորոնք ընդառաջ են գնում ստախանովյան շարժմանը, բայց դեռ չեն կարողացել գլխավորել այն:

Կուսակցական և պրոֆմիութենական կազմակերպությունները պետք է մերկացնեն դասակարգայնորեն

թշնամական տարրերին, վորոնք փորձում են աղտոտել ստախանովյաններին և ստախանովյան շարժման շուրջը համախմբել բանվորների ամենալայն մասսաներին:

Անհրաժեշտ է այժմյան տեխնիկական նորմանները, վորպես հնացած, փոխարինել ավելի բարձր նորմաներով և համապատասխան կերպով փոխել արտադրանքի նորմաները՝ նրանց վորոշ բարձրացման իմաստով, սակայն այն հաշվով, վորպեսզի պրոգրեսիվ գործարքի պայմաններում պահպանվեն ներկայիս գնահատումները, իսկ աշխատավարձի ֆոնդը, շնորհիվ ստախանովյան շարժման, աճի, մեծացվի:

Կենտկոմի պլենումը դատապարտում է արտադրանքի նորմաների սահմանման գոյություն ունեցող սիստեմն ու պրակտիկան, վորպես ԽՍՀՄ առաջավոր տեխնիկայի ձեռք բերած մակարդակին անհամապատասխան և աշխատանքի արտադրողականության հետագա վերելքի խնդրին չհամապատասխանող:

Նորմավորման պրակտիկայում այսպես կոչված փորձնական վիճակագրական նորմաների գերակշռումը, իր արտադրության տեխնիկային թույլ տիրապետող բանվորի արտադրանքին հավասարվելը, արտադրանքի նորմաներ սահմանելիս ձեռնարկության ու ցեխի արտադրական հնարավորությունների աճի, բանվորի էներգո-զինվածության աճի, նրա տեխնիկական ու կուլտուրական մակարդակի աճի իսկական վերլուծության բացակայությունը,—այս բոլորն աշխատանքի նորմավորման գոյություն ունեցող պրակտիկան արգելակ է դարձնում աշխատանքի արտադրողականության և բանվորների աշխատավարձի հետագա աճի ճանապարհին:

Նորմաների սահմանման գոյություն ունեցող պրակտիկայի անկարողությունն ու վնասակարությունը հատկապես ակնհայտ կերպով ցուցադրվում է արտադրման նոր սահմանված նորմաների հսկայական



գերակատարման վրա փաստերը և ընդ նրանց սահմանումից հետո և լավ վորում վոչ թե առանձին բանվորների կողմից, այլ բանվորների զգալի մասսայի կողմից:

Կենտկոմի պլենումն առանձնապես անթույլատրելի է համարում, վոր արտադրության կազմակերպման այդ ամենապատասխանատու տեղամասում ամենուրեք վերապահված է այսպես կոչված՝ նորմավորողներին ու տարիֆավորողներին, իսկ ցեխերի պետերը, ինժեներները, տեխնիկները, վարպետները ու ձեռնարկությունների ղեկավարները կամ բոլորովին չեն զբաղվում նորմավորման հարցերով, կամ մեխանիկորեն դրոշմում են նորմավորողների ու տարիֆավորողների մշակած արտադրանքի նորմաները:

Կենտկոմի պլենումն անհրաժեշտ է համարում.

ա) Արտադրանքի նորմաներ սահմանելիս ելնել ցեխի ու ձեռնարկության արտադրական հնարավորությունների խիստ ստուգումից և ստախանովյանների առաջավոր արտադրական փորձից.

բ) Նորմավորման աշխատանքը և նրա վիճակի համար պատասխանատվությունը դնել ցեխի ու ձեռնարկության ինժեներա–տեխնիկական անձնակազմի վրա՝ ձեռնարկության դիրեկտորի անմիջական ղեկավարությամբ.

գ) Ձեռնարկություններում արտադրանքի նոր նորմաների սահմանման աշխատանքի մեջ լայն կերպով ներգրավել ստախանովյանների կադրերը:

Վորպեսզի ստախանովյան շարժումը տարածվի մեր ամբողջ յերկրում, վորպեսզի մասսայական ստախանովյան շարժումը չմեկնաբանվի վորպես փաղանցիկ կամպանիա, վորպեսզի ստախանովյաններին օգնենք հաղթահարելու այն խոչընդոտները, վոր կան նրանց ճանապարհին, կուսակցական ու պրոֆմիութենական կազմակերպությունները պետք է լծվեն ստախանովյան շարժման զարգացման գործին և ստախա-

նոլոգիաների ցանցերը կազմակերպված հունի մեջ դնելու:

Անհրաժեշտ է օգնել առանց բացառության բոլոր ստախանովականներին՝ բարձրացնելու իրենց տեխնիկական գիտելիքները, նրանց համար ստեղծելով հատուկ տեխնիկական դասընթացներ, որոնք արտադրությունից կտրվել չեն պահանջում:

Անհրաժեշտ է տնտեսավարական ընդարձակել պարտադիր կարգով տեխնիկական մինիմումի ուսուցման յենթակա բանվորների ու բանվորուհիների շրջանը:

Անհրաժեշտ է, վերջապես, տեխնիկական մինիմումի ուսուցումը դարձնել ընդհանուր և պարտադիր բոլոր բանվորների և բանվորուհիների համար, այդ կարևորագույն գործը յենթարկելով բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական մակարդակը մինչև ինժեներա-տեխնիկական աշխատանքի աշխատողների մակարդակին բարձրացնելու խնդրին:

Համկոմկուսի (բ) Կենտկոմի պլենումը հետևյալ ձեռնարկումներն է հանձնարարում՝ ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերի գծով:

## ԾԱՆՐ ԻՆԴՈՒՍՏՐԻԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Ստախանովյան շարժումը ծավալել ամբողջ թափով ամենից առաջ բոլոր արդյունահանող ճյուղերում և առաջին հերթին ածխի ու հանքային արդյունաբերության մեջ, վորտեղ առաջին անգամ սկսել ու ծավալվել է ստախանովյան շարժումը, նավթային արդյունաբերության մեջ, վորտեղ մինչև այժմ ստախանովյան շարժումը չի ծավալվել, սև ու գունավոր մետաղաձուլության մեջ, շինարարության մեջ, շինանյութերի արտադրության և քիմիական այն արտադրություններում, վորոնք սահմանափակված չեն հումքային ռեսուրսներով (առաջին հերթին սինթետիկ ամիակի և բորակածնային պարարտանյութերի,



սինթետիկ կաուչուկի արտադրությունը և այլն):

Այդ ճյուղերում ստախանովյան շարժման կազմակերպումն իր հիմնական նպատակը պիտի ունենա արտադրության առավելագույն մեծացումը և նրա ինքնարժեքի իջեցումը, յելնելով այն բանից, վոր արտադրական ծրագիրը միայն նվազագույն պարտադիր առաջադրանք է:

2. Մեքենաշինության մեջ ստախանովյան շարժումը պետք է ուղղված լինի առաջին հերթին մետաղի ավելի լավ օգտագործմանը, բանվորական ուժի ավելի լավ օգտագործմանը, մեքենայի ժամանակի օգտագործումը բարձրացնելուն, արտադրանքի բարձր վորակին, և գոյություն ունեցող սարքավորումով տեխնիկական տեսակետից կատարելագործված ու վորակով անբասիր մեքենաների արտադրությանը տիրապետելուն և եժանացնելուն:

3. Ելեկտրակայաններում և ելեկտրացանցերում՝ առանց ավարիայի աշխատանքի անցում, սարքավորման օգտագործման բարձրացում՝ ընթացիկ և հիմնական նորոգման մեջ յեղած կաթսայական ու տուրբինային ագրեգատների պարապուրդների քչացման հաշվին, վառելիքի տեսակարար ծախսման կրճատում:

4. Ծանր արդյունաբերության դեֆիցիտային հումք վերամշակող ճյուղերում, աշխատանքի արտադրողականության համար պայքարելու հետ միասին, ստախանովյան շարժումը պիտի ուղղված լինի հումքի տնտեսման, այդ հումքին ուրիշով փոխարինելու, խոտանից ու անպետք մնացորդներից առաջացած կորուստների դեմ պայքարելու գծով, արտադրանքի վորակի խիստ բարելավման, պատրաստի արտադրանքի օգտագործման ժամանակամիջոցն ավելացնելու գծով:

5. Առաջարկել Ծանր Արդյունաբերության Ժողովրդական Կոմիսարիատին՝ 1936 թվին ավարտել ձեռնարկությունների սարքավորման և արտադրական կա

բողությունների տեխնիկական նորմաների վերանայումը՝ նրանց բարձրացնելու ուղղությամբ, վերանայումըն սկսելով ածխահորերից, յերկաթահանքերից, գունավոր մետաղաձուլման հանքերից ու հարստացուցիչ ֆաբրիկներից, նավթահանքերից, նավթաթոր գործարաններից, հալոցներից, պողպատաձուլական ցեխերից, գլանման ստանոկներից, պղնձաձուլական, ցինկային, կապարային, ալյումինի գործարաններից ու հազվագյուտ մետաղների ձեռնարկություններից, — սինթետիկ ամիակի և բորակածնային պարարտանյութերի, ծծմբաթթվի, լուսածնային պարարտանյութերի, սինթետիկ կաուչուկի արտադրությունից, անիլոներկային արդյունաբերությունից և այլն, այլև ցեմենտի գործարաններից ու շինանյութերի մյուս ձեռնարկություններից, նույնպես և կառուցողական մեխանիզմներից:

Նախագծային կարողությունների վերանայման հիմքում դնել տեխնիկական նոր, բարձրացրած նորմաներ: Այդ տեխնիկական նորմաները, վոր վորոշում են սարքավորման առանձին ագրեգատների կարողությունը, պետք է կազմել լավագույն ստախանովյանների ստուգված փորձի հիման վրա:

6· Առաջարկել Ծանր Արդյունաբերության Ժողովրդական Կոմիսարիատին 1936 թվի սկզբին ձեռնարկել մշակման նորմաների վերանայումը՝ դրանք վորոշ չափով բարձրացնելու ուղղությամբ, վորի համար Ծանր Արդյունաբերության Ժողկոմատի հաստատած որացուցային պլանով, նախապես հրավիրել գործարանների, ձեռնարկությունների դիրեկտորների, ցեխերի պետերի, ինժեներների, վարպետների ու ստախանովյանների ճյուղային կոնֆերանսներ· այդ կոնֆերանսներում ուշի ուշով մանրամասն ու կոնկրետ կերպով մշակել թե ձեռնարկությունների սարքավորման ու կարողությունների տեխնիկական նորմաների



վերանայման և թե մշակման նորմաների վերանայման հարցը:

7· Առաջարկել Ծանրարդժողկոմատին՝ մշակել ու հաստատել դասագրքերի, տեղեկատուների, հանրագիտարանների ու ամեն տեսակի տեխնիկական ձեռնարկների վերանայման պլանը՝ դրանք սարքավորման նոր տեխնիկական նորմաներին համապատասխան դարձնելու համար:

8· Ծանր արդյունաբերության 255 առաջատար մասնագիտությունների բանվորներին պարտադիր կերպով տեխնիկական գիտելիքների մինիմումը սովորեցնելն ամբողջովին իրեն արդարացրել է: Պետական տեխնիկական քննությունը տված 797·050 բանվորներից դուրս են յեկել լավագույն ստախանովյանները, այդ թվում ընկ· ընկ· Ստախանովը, Բուսիգինը, Արտյուխովը և շատ ուրիշները: Առաջնակարգ խնդիր համարելով տեխնիկական ուսուցումով ծանր արդյունաբերության բոլոր բանվորներին գլխովին ընդգրկելը, Համկոմկուսի (բ) Կենտկոմի Պլենումը պարտավորեցնում է Ծանրարդյունժողկոմատին կիրառել հետևյալ միջոցառումները·

ա) անհապաղ ընդարձակել պարտադիր կերպով տեխմինիմում սովորելու յենթակա բանվորների շրջանը, այն հաշվով, վոր մոտակա 3–4 տարում տեխուսուցմամբ ընդգրկվեն ծանր արդյունաբերության բոլոր բանվորները, և վերանայել տեխմինիմումի բովանդակությունը՝ ծանր արդյունաբերության նոր հնարավորությունների և նոր խնդիրների համապատասխան·

բ) աչքի ընկնող բանվորների, ստախանովյան բանվորների համար կազմակերպել սոցիալիստական աշխատանքի վարպետների հատուկ դասընթացներ՝ առանց արտադրությունից կտրվելու, այդ դասընթացներն ընդունելով աշխատանքի բարձր արտադրողականություն տվող ստախանովյաններին:

## ԹԵԹԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Թեթև արդյունաբերության մեջ ստախանովյան շարժումը զարգացնել առաջին հերթին հումույթի սկզբնական վերամշակման ճյուղերում՝ բամբակազտիչ գործարաններում, վուշի գործարաններում, կանեփի գործարաններում, մետաքսակարժական գործարաններում, կաշվի սուրագատների ձեռնարկություններում յեվ ոժանդակ նյութերի, դետալների ու մեքենաների արտադրության մեջ: Տեքստիլ ճյուղերում. առաջին հերթին վուշի և մետաքսի արդյունաբերության մեջ և մանավանդ վուշագործական և մետաքսագործական ձեռնարկություններում՝ չթագործական, տրիկոտաժի, կանեփի-ջութի արդյունաբերության մեջ, առաջին հերթին մանածագործությունում և, մասնավորապես սանրած ու վոլորած մանվածք մշակելու գործում:

Ստախանովյան շարժման կապակցությամբ հումույթի ծախսելու գործում տնտեսել, լրիվին օգտագործել ավելորդ մնացորդներն ու հալակրուստը, լայնորեն զարգացնել և օգտագործել փոխանյութերը՝ միաժամանակ լավացնելով սորտիմենտը, արտադրանքի վորակը և եժանացնել այն:

2. Առաջարկել Թեթև Արդ. Ժողկոմատին, սարքավորման արտադրողականության նվաճումների և լավագույն ստախանովյանների աշխատանքի փորձի հիման վրա, 1936 թվի ընթացքում վերանայել գոյություն ունեցող ձեռնարկությունների սարքավորման տեխնիկական նորմաները և արտադրական կարողությունները՝ վերջիններս բարձրացնելու ուղղությամբ, նույնպես և նոր կառուցվող ֆաբրիկների ու գործարանների նախագծային կարողությունները, այդ աշխատանքն առաջին հերթին կատարելով բամբակագործարաններում, վուշագործարաններում, ար-



դյունաբերության վուշագործական, կաշեգործական և այլ ճյուղերում:

Ապահովել արտադրական կարողությունների ամենալիակատար օգտագործումը և սարքավորման օգտակար գործողության գործակցի բարձրացումը՝ մեքենաների, ստանոկների և ագրեգատների պարապուրդները վերացնելու և արագությունները մեծացնելու միջոցով: Ստախանովյանների՝ մեծ քանակությամբ ստանոկների ու մեքենաների սպասարկման անցնելիս ապահովել սարքավորման արտադրողականության հետագա բարձրացումը:

3. Տեխնիկական նորմաների վերանայման համապատասխան, վերանայել թեթև արդյունաբերության ճյուղերում մշակման նորմաները վորոշ չափով բարձրացնելու ուղղությամբ: Միևնույն տեսակի արտադրանքի մշակման նորմա սահմանել մի արտադրական բանվորի համար՝ ջուլհակության և մանածագործության մեջ: Վերանայել մի բանվորի կողմից ստանոկների և մեքենաների սպասարկման նորմաները, ստուգել խառցրած աշխատանքներ կատարող բրիգադների կազմն ու չափերը, և ապահովել լավագույն պայմաններ և նյութական շահագրգռվածություն վարպետների ու յենթավարպետների աշխատանքում:

Տեխնիկական նորմաներ մշակելու և ձեռնարկությունների կարողությունները վերանայելու համար առաջարկել Թեթևարդյունժողկոմատին՝ 1936 թվի առաջին կիսամյակի ընթացքում հրավիրել ձեռնարկությունների դիրեկտորների, գլխավոր ինժեներների, ցեխերի պետերի, վարպետների, յենթավարպետների ու լավագույն ստախանովյանների ճյուղային արտադրական կոնֆերանսներ՝ այդ աշխատանքն ավարտելով 1937 թվի արտադրական պլանները կազմելու մոմենտին:

4. Ինժեներա-տեխնիկական կադրերն ավելի լավ նախապատրաստելու խնդրի կապակցությամբ առա-

ջարկել Թեթև Արդժողկոմատին վերանայել ինժեներա-տեխնիկական անձնակազմի նախապատրաստման սիստեմը, նույնպես և դասագրքերն ու տեխնիկական տեղեկատուները, վերացնելով հնացած տեխնիկական ցուցմունքներն ու տեխնիկական նորմաները:

Միջոցառումներ կիրառել ինժեներա-տեխնիկական անձնակազմի, վարպետների ու յենթավարպետների վորակավորումը բարձրացնելու համար, ապահովելով ինժեներա-տեխնիկական աշխատողների փորձի փոխանակումը Միության լավագույն ձեռնարկությունների հետ և արտասահմանյան տեխնիկայի փորձին ծանոթանալը:

Տեխմինիմումի գոյություն ունեցող ծրագրերի հետ միասին, սահմանել տեխմինիմումի ավելի ընդարձակ ծրագրեր և ապահովել տեխմինիմումի թե գոյություն ունեցող և թե ավելի ընդարձակ ծրագրի յուրացումը բոլոր բանվորների կողմից 1936 և 1937 թվերի ընթացքում, իսկ ստախանովյան-վինոգրադովյանների համար կազմակերպել դասընթացների ու դպրոցների ցանց առանց արտադրությունից կտրելու:

5. Թեթև արդյունաբերության մեջ աշխատավարձի սիստեմում գոյություն ունեցող թերությունները վերացնելու և ամենից առաջ անթույլատրելի «պրոգրեսիվ նորմաների ներսում» վերացնելու նպատակով՝ հանձնարարել Թեթև Արդյունաբերության Ժողկոմատին ներկայացնելու Կենտկոմին ու Ժողկոմխորհին իր առաջարկներն աշխատավարձի վերակառուցման մասին, հաշվի առնելով արտադրության մեջ առաջատար բանվորների ու ինժեներների վորակյալ կադրերին նյութապես խրախուսելու անհրաժեշտությունը:

6. Թեթև արդյունաբերությանը ներկայացվող հիմնական պահանջը համարել մշտական սիստեմատիկ պայքարն արտադրանքի լավացման և ասորտիմենտի բազմազանության համար, նրա վորակի բարձրացման



համար, լավագույն ձևավորման, նկարազարդման, արտադրանքի գունեղության և նրբության համար՝ յերկրորդ հնգամյակի պլանի լրիվին կատարման խնդրին համապատասխան:

## ՍՆՆԴԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Համկոմկուսի (բ) Կենտկոմի Պլենումը ԽՍՀՄ Սննդարդժողկոմատի և սննդի ձեռնարկությունների բոլոր ղեկավարների առաջ խնդիր է դնում ստախանովյան շարժումն ըստ ամենայնի ծավալել առաջին հերթին շաքարավազի և ռաֆինադի գործարաններում բիսկվիտային ֆաբրիկներում, սպիրտի գործարաններում, ձկնարդյունաբերությունում, աղահանքերում և շախտերում, վորտեղ հումույթային ռեսուրսների առատությունը և ձեռնարկությունների տեխնիկական վերակառուցումն ավելի բարենպաստ պայմաններ են ստեղծում աշխատանքի արտադրողականության բարձրացման և արտադրանքի արագ աճման համար:

Ստախանովյան շարժման ծավալմանը սննդի ձեռնարկություններում պետք է ուղեկցի արտադրության մեջ հումույթի, կիսաֆաբրիկատների, փաթթելու և այլ նյութերի կորուստներն ամենամեծ չափով կրճատելու համար մղվող պայքարը ու բանվորներին հումույթ և նյութեր մատակարարելու ամբողջ գործի բարելավումը և ինքնարժեքի իջեցման համար մղվող պայքարը:

Համկոմկուսի (բ) Կենտկոմի Պլենումն առաջարկում է ԽՍՀՄ Սննդարդժողկոմատին.

1. 1936 թվի ընթացքում, ստախանովյանների աշխատանքի փորձի հիման վրա, վերանայել առանձին ագրեգատների, ապարատների ու կոնվեյերների իրական տեխնիկական կարողությունները՝ վերջինս բարձրացնելու ուղղությամբ, և դրա հիման վրա սահմանել ձեռնարկությունների արտադրական կարողությունները:

1009
39366
ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ-ССР
им. А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆ.

2. Հայտնաբերել և վերացնել ձեռնարկությունների կարողությունը նվազեցնող նեղ տեղերը, 1936 թ. կապիտալներդրումներն առաջին հերթին ուղղելով այդ նպատակին:

3. Վերակառուցել ձեռնարկությունների ղեկավարությունը, լայնորեն արմատացնելով այն ստուգված փորձը, վորը ձեռք են բերել ստախանովյաններն աշխատավայրը լավագույն կերպով կազմակերպելու, աշխատանքը բաժանելու և վորակյալ բանվորներին վոչ վորակյալ աշխատանքից ազատելու, ագրեգատների և կոնվեյերների աշխատանքային արտադրությունը մեծացնելու, ձեռքի աշխատանքի պրոցեսները մեքենայացնելու, սարքավորումը նոր ձևով, մի բանվորի կողմից մի քանի ագրեգատներ սպասարկումը հեշտացնող ձևով դասավորելու, ներգործարանային տրանսպորտի և ոժանդակ ցեխերի աշխատանքը լավացնելու, նորոգման գործն ավելի լավ կազմակերպելու և այլ ասպարեզներում:

4. Վերանայել գոյություն ունեցող տեխնիկական հրահանգները, տեղեկատուները և տեխնիկական ձեռնարկները ու հրատարակել նորերը՝ սննդի արդյունաբերության ստախանովյանների աշխատանքի փորձի հիման վրա:

5. Հաշվի առնել աշխատանքի կազմակերպման և տեխնոլոգիական պրոցեսի նոր ձևերը՝ ստախանովյանների աշխատանքի փորձի հիման վրա և վերանայել ձեռնարկությունների տեխնիկական հնացած նորմաները՝ նոր շինարարություն նախագծելու ժամանակ, ինչպես ձեռնարկությունների կարողությունը հաշվելիս, այնպես ել ագրեգատները դասավորելիս:

6. Հրավիրել կոնֆերանսներ ըստ սննդի արդյունաբերության ճյուղերի, մասնակցությամբ՝ դիրեկտորների, ինժեներների և ստախանովյան բանվորների, վերանայելու տեխնիկական նորմաները, վերջիններս բարձրացնելու ուղղությամբ, և դրա համապատասխան արտադրանքի նորմաները վերանայելու՝ վորոշ չափով բարձրացնելու համար, նույնպես և ձեռնարկությունների նեղ տեղերը վերացնելու միջոցառումներ մշակելու համար այնպես, վոր նոր նորմաները մտցվեն նոր սեզոնի սկզբից, առաջին հերթին, շաքարի, աղի, ձկան և սպիրտի արդյունաբերությունում:



7. Ավելի լայն ծավալել բանվորների տեխնիկական ուսուցման գործը, ապահովելով տեխմինիմումի անցնումը սննդի ձեռնարկությունների բոլոր մշտական բանվորների, նույնպես և վորակյալ պրոֆեսիաների սեզոնային բանվորների կողմից, այն հաշվով, վոր նրանք տեխմինիմումից պետական քննություն տան 1936 և 1937 թվերի ընթացքում:

Տեխմինիմումից քննություն բռնած բանվորների համար կազմակերպել բարձր տիպի հատուկ դասընթացներ, վոր այդ դասընթացներն ավարտելուց հետո պետական քննություն տան 2-րդ աստիճանի տեխնիկական գիտելիքներից, առանց արտադրությունից կտրվելու:

Լայն ծավալել ձեռնարկությունների դիրեկտորների, ինժեներների, քիմիկոսների և տեխնիկների համար կատարելագործման կարճատև դասընթացներ, մանավորապես ոգտագործելով դրա համար արտադրության սեզոնային ընդմիջումները:

Կատարելագործման դասընթացներով 1936 թվին անց կացնել շաքարի, սպիրտի, մսի, ձեթի և հրուշակային արդյունաբերության ինժեներ-տեխնիկական աշխատողների մեծամասնությունը:

8. Համկոմկուսի (բ) Կենտկոմի Պլենումը պարտավորեցնում է սննդի արդյունաբերության ղեկավարներին հաշվի առնել, վոր ստախանովյան շարժումը սննդի արդյունաբերության առաջ վոչ միայն աշխատանքի արտադրողականության բարձրացման և արտադրանքի քանակի մեծացման խնդիրներն է դնում, այլև պահանջում է ամեն կերպ բարելավել որ-

նընդամթերքների համի ու սննդարարության վորակը, բարելավել նրանց փաթեթումը, ձևավորումը, ասորտիմենտի հարստացումը՝ համապատասխան աշխատավորների մեծացած պահանջների և ծավալվող խորհրդային առևտրի:

## ԱՆՏԱՌԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Ստախանովյան շարժումը ծավալել փայտամթերումներում, առաջին հերթին մեքենայացված անտառանյութի կետերում՝ արմատախիլ անելով փայտամթերման ապարատի հետամնաց մասի հակամեխանիզատորական տրամադրությունները: Թղթի արդյունաբերության մեջ՝ կիսաֆաբրիկատային ցեխերում, ցելյուլոզի և փայտանյութի մշակման գծով կաթսայի մեկ խոր. մետրից ստացվող ցելյուլոզի ավելացման, այլև թուղթ շինող մեքենաների արտադրանքի ավելացման նկատմամբ: Փայտասղոցման մեջ կենտրոնանալ հումույթ տվող շրջանակ հերթափոխության արտադրողականության բարձրացման վրա, մանավանդ ավելի լավ սարքավորված ձեռնարկություններում, սղոցված նյութերի արտադրանքի ավելացման վրա: Կահույքի, փաներայի և լուցկու արդյունաբերության մեջ — սարքավորման արտադրողականության բարձրացման, արտադրանքի վորակի բարելավման վրա, անտառա-քիմիական արդյունաբերության մեջ — արտադրանքի քանակի ավելացման և ապարատների շրջանառության արագացման վրա: Անտառային արդյունաբերության առանձնապես կարևոր խնդիրը համարել փայտանյութերի ինքնարժեքի իջեցումը:

2. Առաջարկել Անտառային Արդյունաբերության Ժողովրդական Կոմիսարիատին վերանայել սարքավորման արտադրողականության տեխնիկական նորմաները և ձեռնարկությունների արտադրական կարողությունը նրանց բարձրացման ուղղությամբ՝ առաջին հերթին փայտամթերման ու փոխադրման ասպարեզում, թղթի արդյունաբերության, փայտասղոցման և փայտաքիմիայի մեջ:

Նորմաների և արտադրական կարողությունների վերանայման կապակցությամբ, վերանայել՝ վորոշ չափով բարձրացման ուղղությամբ 1936 թվի առաջին կիսամյակի ընթացքում, անտառային արդյունաբերության ֆաբրիկ – գործարանային ճյուղերի արտադրական նորմաները և 1936 թվի ընթացքում՝ փայտամթերման ու փոխադրման արտադրական նորմաները, վորի համար, նախորոք հրավիրել ճյուղային կոնֆերանսներ՝ ձեռնարկությունների, գործարանների, անտառային արդյունաբերական տնտեսությունների դիրեկտորներից, ցեխերի, անտառանյութի կետերի պետերից, ինժեներա-տեխնիկական աշխատողներից և ստախանովյան բանվորներից:

3. Առաջարկել Անտառային Արդյունաբերության Ժողկոմատին՝ վերանայել դասագրքերը, տեղեկատուները, տեխնիկական ձեռնարկները և նոր ձեռնարկությունների նախագծման ձեռնարկները՝ հաշվի առնելով ստախանովյանների նվաճումները գոյություն ունեցող նորմաների գերակատարման ասպարեզում:

Գիտահետազոտական ինստիտուտների աշխատանքը կենտրոնացնել ստախանովյանների փորձի ոգտագործման ու լայն տարածման վրա:

4. Նշելով անտառային արդյունաբերության ձեռնարկություններում տեխնիկական ուսուցմամբ բանվորների թույլ ընդգրկումը, Համկոմկուսի (բ) Կենտկոմի Պլենումը պարտավորեցնում է Անտառժողկոմատին՝ բանվորների տեխնիկական ուսուցումը ծավալել՝ յերկու տարվա ընթացքում հիմնական մասնագիտության բոլոր բանվորներին ընդգրկելու հաշվով: Վերանայելով տեխմինիմումի բովանդակությունը,

1936 թվի ընթացքում առանց արտադրությունից կըտրելու կարճատև դասընթացներից անցկացնել առաջատար պրոֆեսիաների բանվորներին, առաջին հերթին թղթի, փայտամշակման և անտառային – քիմիական արդյունաբերության, և ապա փայտամթերման ու լաստառաքման կադրային բանվորներին, սահմանելով պետական տեխնիկական քննություն:

5. Պարտավորեցնել Անտառժողկոմատին՝ ինչպես հատուկ կարճատև դասընթացներ, խմբակներ կազմակերպելու, նույնպես և անհատական ուսուցման միջոցով ապահովել ստախանովյան բանվորների տեխնիկական վորակավորումը, բարձրացնելով վոչ միայն նրանց վորակավորումը, այլև հանրակրթական ու կուլտուրական քաղաքական մակարդակը:

## ՅԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Ստախանովյան շարժումը ծավալել առաջին հերթին՝ շոգեքարշերի, վագոնների, ուղու նորոգման և շահագործման գծով աշխատող բանվորների մեջ, վորոնք հետ են մնում մեքենավարներից:

Շահագործման ծառայության մեջ ստախանովյան շարժման հիմնական խնդիրն է՝ կայարանների աշխատանքի բարելավումը, ապրանքատար և մանավանդ մարդատար գնացքների առաքումն ու ուղեկցումը ճշտիվ ըստ չվացուցակի, վագոնների առևտրական արագության ու որական միջին վազքի հետագա բարձրացումը, կայարաններում և բեռնման ու բեռնաթափման պարապուրդների կրճատումը:

Շոգեքարշային ու վագոնային տնտեսության մեջ ստախանովյան – կրիվոնոսյան շարժումը պետք է ուղղվի դեպի նորոգման վորակի բարձրացումը և նորոգման ժամկետների կրճատումը, գնացքներին առանց ընդհատման շոգեքարշեր տալը, գնացքների լիակատար ավտոարգելակմանն անցնելու ամբաղնդմանը, ցանցի դեպոներից շատերում տեխնիկական արդությունը առաջավոր դեպոների ձեռք բերած մակարդակին հասցնելը, շոգեքարշերի որական միջին վազքի ավելացումը և վառելանյութի տնտեսումը:

Ճանապարհային տնտեսության մեջ ստախանովյան շարժումն ամենից առաջ ուղղված պետք է լինի դեպի ուղու բարձրորակ պահպանումը, ուղու անկանոնությունների վերացումը:

Առաջնահերթ պահանջը, վոր պարտադիր է յերկաթուղային տրանսպորտի բոլոր ծառայությունների, բոլոր պրոֆեսիաների համար՝ առանց ավարիայի աշխատանքն է: Առանց ավարիայի ու խորտակման աշխատանքն ստախանովյան –կրիվոնոսյան աշխատանքի վճռական ցուցանիշն է տրանսպորտում:

2. Առաջարկել Հաղորդակցության Ճանապարհների ժողկոմատին 1936 թվին ավարտել 1935 թվին ըսկսած տեխնիկական նորմաների վերանայումը՝ շարժական կազմի ոգտագործման, գծերի անցունակության և սարքավորման ոգտագործման բարձրացման ուղղությամբ: Վերանայումը կատարել առաջին հերթին Հաղճանժողկոմատի գործարաններում, բեռնման բեռնաթափման և տեսակավորման կայարաններում և շոգեքարշերի, վագոնների և ուղու նորոգման գծով:

Մինչև 1936 թվի ապրիլ ամիսը վերանայել գնացքների յերթևեկության գրաֆիկը և գծերի անցունակությունն առաջին հերթին ամենալարված գծերինը:

3. Առաջարկել Հաղորդակցության Ճանապարհների ժողկոմատին 1936 թվի յերկրորդ յեռամսյակից ձեռնարկել արտադրական նորմաների վերանայմանը՝ նրանց վորոշ չափով բարձրացման ուղղությամբ՝ հաշվի առնելով տեխնիկական նոր նորմաները: Դրա համար նախորոք Հաղճանժողկոմատի հաստատած որացուցային պլանով ըստ տնտեսության ճյուղերի ու յերկաթուղային տրանսպորտի կարևորագույն կատեգորիաների, հրավիրել ստախանովյանների, վարպետ–

ների, ինժեներների, հրամանատարների համապատասխան խորհրդակցություններ:

Ավելացնել անհատական գործավարձով աշխատողների քանակը, կիրառել վարձատրման ակորդային սիստեմը, ճանապարհային և շինարարական աշխատանքներում, մեքենավարների օրինակով իրեն արդարացրած աշխատանքի պրոգրեսիվ-գործարքային վարձատրումը կիրառել նաև տրանսպորտի մյուս աշխատողների նկատմամբ:

4. Առաջարկել Հաղորդակցության ճանապարհների Ժողովրդական Կոմիսարիատին տրանսպորտում ավելի, քան ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերում արմատացած պահպանողական տարրերի մերկացման փորձի հիման վրա կազմակերպել դասագրքերի, տեղեկատուների, հանրագիտարանների, ամեն տեսակի տեխնիկական ձեռնարկների և հրահանգների վերանայումը, վորպեսզի նրանց համապատասխան դարձնի տրանսպորտի աշխատանքի նոր պրակտիկային և տեխնիկական նոր նորմաներին:

5. Առաջարկել Հաղորդակցության ճանապարհների Ժողկոմատին՝ կազմակերպել տեխնիկական գիտելիքների մինիմումի ուսուցումն առանց արտադրությունից կտրելու, ամենից առաջ յերկաթուղային տրանսպորտի ստորին հրամանատարական կազմի յեվ առաջատար մասնագիտության բանվորների համար: 1936 թվի ընթացքում տեխմինիմումը սովորեցնել վոչ պակաս քան 500 հազար բանվորների: Մշակել բանվորների ուսմամբ ընդգրկելու հետագա պլանն այն հաշվով, վորպեսզի 2–3 տարվա ընթացքում յերկաթուղային տրանսպորտի բոլոր աշխատողներին սովորեցնել տեխմինիմումը:

Առանց արտադրությունից կտրելու, իսկ անհրաժեշտության դեպքում հատուկ դասընթացներում կազմակերպել առաջավոր ստախանովյան – կրիվոնոսյան բանվորների ավելի վորակյալ տեխնիկական ուսուցում ավելի բարձր ծրագրով, ապահովելով նրանց դասագրքերով և վորակյալ դասատուներով:

Դասընթացները հաջողությամբ անցած, լավագույն ստախանովյաններից առաջ քաշել ավելի բարձր վորակավորման և հրամանատարական պոստերի (որինակ՝ բրիգադիրներին — վարպետի, մեքենավարի օգնականներին—մեքենավարի, սլաքավարներին — կազմողների և ուղիների ու կայարանների հերթապահների, կազմողներին — կայարանի հերթապահների և այլն):

---

# ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

## ՀԱՄԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ ՊԼԵՆՈՒՄԻ ԲԱՆԱՁԵՎԸ՝ ԸՆԿ. ՅԵԺՈՎԻ ԶԵԿՈՒՅՄԱՆ ԱՌԹԻՎ, ԸՆԴՈՒՆՎԱԾ 1935 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ

Կուսակցության անդամների և թեկնածուների կուսակցական փաստաթղթերի ստուգումը, վորը կատարվեց Համկոմկուսի (բ) Կենտկոմի 1935 թվի մայիսի 13-ի վորոշման հիման վրա, հանդիսացավ Համկոմկուսի (բ) շարքերի ամրապնդման հսկայական կարևորություն ունեցող կազմակերպչա-քաղաքական ձեռնարկում:

Կուսակցական փաստաթղթերի ստուգման ընթացքում լիովին հաստատվեցին Համկոմկուսի (բ) Կենտկոմի կողմից 1935 թվի մայիսի 13-ի նամակում արված ցուցմունքներն այն մասին, վոր շատ կուսկազմակերպություններում կուսակցական փաստաթղթերը տալու և պահպանելու գործում տիրում է կամայականություն և քաոս՝ կուսակցության անդամների և թեկնածուների հաշվառման դրվածքի ասպարեզում:

Կուսակցական փաստաթղթերի ստուգման կարևորագույն արդյունքն է հանդիսանում այն, վոր կուսակցական կազմակերպությունները կուսակցության մեջ սպրդած խորթ մարդկանց մերկացման հետ միաժամանակ, զգալի չափով հաղթահարել են այդ կազմակերպչական թափթփվածության տարրերը, կարգի են բերել կուսակցության անդամների հաշվառումը,



ավելի լավ են ուսումնասիրել կոմունիստներին, և դրա հիման վրա շատ նոր ընդունակ աշխատողների առաջ են քաշել ղեկավար կուսակցական, խորհրդային և տնտեսական աշխատանքի:

Կուսակցական փաստաթղթերի ստուգումը կազմակերպելու ամբողջ աշխատանքի ամենահսկայական առավելությունը հանդիսացավ այն, վոր Համկոմկուսի (բ) Կենտկոմի հանձնարարությամբ՝ ստուգմամբ զբաղվել են անմիջականորեն իրենք կուսակցական մարմինները, առանց վորևէ հատուկ հանձնաժողովներ ստեղծելու: Այդպիսով կուսակցական ապարատի ղեկավար կադրին հաջողվեց Համկոմկուսի (բ) շարքերը սպրդած թշնամիներին և կուսակցության դեմ տարած նրանց քայքայիչ աշխատանքի մեթոդների մերկացման օրինակով բացահայտել իրենց սեփական թերություններն ու սխալները կուսակցական կազմակերպչական աշխատանքում և միջոցներ ձեռք առնել այն արմատապես բարելավելու համար: Կուսակցական ապարատը զգալի չափով վերակառուցել է իր աշխատանքը և ամրապնդվել, ինչպես նոր, ստուգված կադրերի ներգրավման հաշվին, այնպես և կուսակցական աշխատանքի համար անպետք մարդկանցից մաքրելու հաշվին, առաջին հերթին նրանցից, ովքեր չնայած Համկոմկուսի (բ) Կենտկոմի բազմիցս նախազգուշացումներին, չըմբռնեցին կուսակցական փաստաթղթերի ստուգման իմաստն ու նշանակությունը, ոպորտունիստորեն մոտեցան նրա անցկացմանը, իսկ մի շարք դեպքերում ուղղակի ընդդիմադրություն ցույց տվին Համկոմկուսի (բ) շարքերն ամրապնդելու այդ կարևորագույն ձեռնարկմանը:

Այս բոլորը միասին վերցրած, ապահովեց Համկոմկուսի (բ) Կենտկոմի 1935 թվի մայիսի 13-ի նամակում դրված հիմնական խնդրի հաջող լուծումը, այն է՝ «բոլշևիկյան կարգ ու կանոն մտցնել մեր սեփական կուսակցական տանը» և բարձրացրեց վողջ

կուսակցական կյանքի մակարդակը, բարձրացնելով կուսակցական կազմակերպությունների բոլշևիկյան մարտունակությունը։

Համկոմկուսի (բ) Կենտկոմի Պլենումը գտնում է, որ այժմ, երբ կուսակցական փաստաթղթերի ստուգումը մոտենում է իր վերջավորությանը, կարևորագույն խնդիր է հանդիսանում ըստ ամենայնի ամրապնդել Համկոմկուսի (բ) շարքերը թշնամական տարրերից մաքրելու ուղղությամբ բոլոր կուսակցական կազմակերպությունների կողմից կատարված հսկայական աշխատանքը և մինչև վերջ հանել կուսփաստաթղթերի ստուգումից բղխող բոլոր դասերը։

Գլխավոր դասը, ինչպես այդ ցույց տվեց կուսակցական փաստաթղթերի ստուգման փորձը, այն է, որ կուսակցության անդամներն ու կուսակցական կազմակերպությունները դեռևս վատ են յուրացրել Համկոմկուսի (բ) Կենտկոմի բազմիցս ցուցմունքները կուսակցության անդամների մեջ բոլշևիկյան զգոնությունն ու կարգապահությունն ըստ ամենայնի բարձրացնելու անհրաժեշտության մասին։

Կուսակցական փաստաթղթերի ստուգման ամբողջ փորձը ցույց տվեց կուսակցության այն ցուցմունքի կարևորագույն նշանակությունը, թե դասակարգային թշնամին մեր հաջողությունների աճմանը զուգընթաց դիմում է պայքարի ավելի կատարելագործված մեթոդների, դրա համար առաջին հերթին օգտագործելով կոմունիստների օպորտունիստական բարեհոգությունն ու անհոգությունը։

Միայն բոլշևիկյան զգոնության բացակայությամբ կարելի յե բացատրել Համկոմկուսի (բ) շարքերը նոր անդամներ ընդունելիս կուսակցության կանոնադրությունը կոպտաբար խախտելու բազմաթիվ փաստերը, որոնք հայտնաբերվեցին ստուգման ընթացքում։ Ընդունելությունը կուսակցության մեջ, այդ թվում նաև այլ կուսակցություններից դուրս յե-



կածների, տարահպատակների և յեղբայրական կոմկուսակցությունների անդամների ընդունելությունը շատ դեպքերում կատարվել է առանց յուրաքանչյուր ընդունվողի անհատական քննության, առանց նրա ընդունելությունը շրջկոմում, իսկ հարկ յեղած դեպքում և Համկոմկուսի (բ) Կենտկոմում հաստատելու, առանց համապատասխան յերաշխավորությունների, առանց ընդունելության կատեգորիաները պահպանելու և այլն։ Կանոնադրության այսպիսի խախտումով պայմաններ եյին ստեղծվում կուսակցական շարքերի կեղտոտման համար և հաջողվում եր Համկոմկուսի (բ) շարքերը մտնել կուսակցության բացահայտ թշնամիներին, այդ թվում նույնիսկ օտարերկրյա հետախուզությունների լրտեսներին, որոնք սքողվում եյին քաղվտարանդիների և յեղբայրական կոմկուսակցության անդամների անվան տակ։

Միայն բոլշևիկյան զգոնության բացակայությամբ կարելի յե բացատրել այն, որ շատ կուսկազմակերպություններում արմատացել եր կորցված ու հափշտակված փաստաթղթերի փոխարեն կուսակցական փաստաթղթեր տալու հանցագործ — պարզեցված պրակտիկան, որի ժամանակ շատ ավանտյուրիստների, ժուլիկների, յերկերեսանիների և այլ հակահեղափոխական տարրերին հեշտությամբ հաջողվում եր կուսակցական տոմսեր ստանալ կեղծ փաստաթուղթ ներկայացնելով, իսկ հաճախ պարզապես կուստոմսը կորցնելու մասին թերթից կտրված հայտարարությունը ներկայացնելու միջոցով։

Միայն բոլշևիկյան զգոնության բացակայությամբ կարելի յե բացատրել այն, որ կուսակցական տոմսերը հեռացվածներից որպես կանոն հետ չեյին առնվում։ Դրանով լայնորեն օգտվում եյին կուսակցության շատ թշնամիներ, որոնք մի կազմակերպությունում հեռացվելուց հետո, կուստոմսերը չհանձնելով, տեղափոխվում եյին մի ուրիշ կազմակեր

պությունն և չարունակում էին այնտեղ համարվել Համկոմկուսի (բ) անդամներ: Այդ հեշտանում էր սահմանված պրակտիկայով, վորի ժամանակ կուսակցության անդամն առանց հաշվառումից հանվելու կարող էր տեղափոխվել ցանկացած կազմակերպություն և առանց վորևէ ստուգման հաշվի առնվել այնտեղ:

Միայն բոլշևիկյան զգոնության բացակայությամբ կարելի յե բացատրել այն, վոր Համկոմկուսի (բ) նոր անդամներ ընդունելու, կուսակցության անդամների հաշվառման ու հաշվից հանելու, կուսակցական փաստաթղթերը պահելու և այլ կարևորագույն կուսակցական պարտականությունները ամբողջությամբ վերավստահված էր տեխնիկական ապարատին: Տեխնիկական աշխատողների ընտրության նկատմամբ հարկ յեղած ուշադրության բացակայության հետևանքով կուսակցության թշնամիներին հաջողվել էր սողոսկել նույնիսկ մի քանի շրջկոմների կուսակցական ապարատը, վորտեղ նրանք ոգտվելով իրենց անկոնտրոլ դրությունից և ղեկավար կուսաշխատողների կողմից կուսաշխատանքի տեխնիկայի նկատմամբ յեղած արհամարհական վերաբերմունքից, կուսակցական փաստաթղթեր եին տալիս, կամ վաճառում դրանք կուսակցության և խորհրդային իշխանության գործի դեմ քայքայիչ աշխատանքի իրենց համագործակիցներին:

Համկոմկուսի (բ) Կենտկոմի Պլենումը պարտավորեցնում է կուսակցական բոլոր կազմակերպություններին, մինչև վերջը յուրացնել այս դասերը և վերջ դնել այն խայտառակություններին, վորոնք հայտնաբերվեցին կուսակցական փաստաթղթերի ստուգման ընթացքում: Միայն այդ դասերը յուրացնելով և հետևողականորեն կատարելով Համկոմկուսի (բ) Կենտկոմի բազմիցս ցուցմունքները՝ հեղափոխական բոլշևիկյան զգաստությունն ամեն կերպ բարձրացնելու և



«մեր կազմակերպչական աշխատանքի մակարդակը քաղաքական ղեկավարության մակարդակին հասցնելու» անհրաժեշտության մասին, կուսկազմակերպությունները կկարողանան մինչև վերջ արմատախիլ անել ոպորտունիստական բարեհոգության արմատները, սրել կուսակցության անդամների բոլշևիկյան զգոնությունը, կուսակցական ապարատը դաստիարակել բոլշևիկյան սրության և անհաշտվողականության վոգով և հասնել այն բանին, վոր կուսակցության կանոնադրությունը դառնա նրա ներքին կյանքի իսկապես անխորտակելի հիմքը: Դրա համար կարևորագույն պայման է հանդիսանում այն, վոր կուսակցական ապարատի պատասխանատու աշխատողներն իրենք անմիջականորեն զբաղվեն կուսակցության նոր անդամների ընդունելության գործով, կուսակցական փաստաթղթերը տալով և կոմունիստների հաշվառման ու ուսումնասիրման դրվածքով: Միայն այս պայմանով կուսկոմների, շրջկոմների, քաղկոմների և մարզկոմների քարտուղարները կկարողանան ինչպես հարկն է ճանաչել կուսակցության անդամներին, ճիշտ ոգտագործել նրանց աշխատանքում, նրանցից դաստիարակել իսկական բոլշևիկներ և հետևաբար նաև դառնալ կուսակցական կազմակերպության իսկական ղեկավարներ:

Համկոմկուսի (բ) Կենտկոմի պլենումը գտնում է, վոր կուսակցական փաստաթղթերի ստուգման դրական արդյունքներն ամրապնդելու, առանձնապես կուսակցության անդամների հաշվառման հետագա կարգավորման մերձավոր ձեռնարկումը հանդիսանում է կուսակցական տոմսերի, թեկնածուական քարտերի և կուսակցության անդամների ու թեկնածուների հաշվառման փաստաթղթերի փոխանակումը: Այս միջոցառումը, ինչպես ցույց տվեց ստուգման փորձը, առավել ևս անհրաժեշտ է, վորովհետև հենց կուսակցական փաստաթղթերն իրենք (կուսակցական տոմսերը,

*թեկնածուական և հաշվառման քարտերը) գտնվում են անբավարար վիճակում և պահանջում են փոխանակում:*

*Կուսփաստաթղթերի փոխանակումը կատարելիս կուսակցական կազմակերպությունները պետք է հաշվի առնեն անցյալում տեղի ունեցած բազմաթիվ սխալները, յերբ կուսակցական տոմսերի փոխանակումը դիտվում էր վորպես մի կուստոմսի մեխանիկական փոխարինումը մյուսով: Կուսակցական տոմսերի փոխանակումը և նոր հաշվառման քարտերի կիրառումը հանդիսանում է կուսակցական-կազմակերպչական ամենալուրջ ձեռնարկում, վորը պետք է ամրապնդի կուսակցական փաստաթղթերի ստուգման արդյունքները և նպաստի Համկոմկուսի (բ) շարքերի հետագա ամրապնդմանը:*

*Համկոմկուսի (բ) Կենտկոմի Պլենումը գտնում է, վոր կուսակցական փաստաթղթերի ստուգման արդյունքներն ամենայն ակնբախությամբ ցույց տվին, վոր Համկոմկուսի (բ) Կենտկոմը միանգամայն ճիշտ է վարվել, յերբ մերժել է շատ կուսակցական կազմակերպությունների բազմիցս առաջարկությունները՝ կուսակցության նոր անդամների ընդունելությունը վերսկսելու մասին:*

*Համկոմկուսի (բ) Կենտկոմը* 1935 *թվի մայիսի* 13-*ի նամակում մատնացույց արեց տեղական կուսակցական կազմակերպություններին, վոր՝*

«խոսք անգամ չի կարող լինել կուսակցության մեջ ընդունելությունն սկսելու մասին, քանի դեռ կուսակցության անդամների հաշվառման գործում այդպիսի ամոթալի քաոս է տիրում, քանի դեռ մեր սեփական կուսակցական տան մեջ կարգ ու կանոն չի մտցվի: Միայն կոմունիստների հաշվառումը կուսակցական տոմսեր տալու և դրանց պահպանման սիստեմը լիակատար կանոնավոր վիճակի բերելուց հետո,



Կենտկոմը կարող է հարց դնել կուսակցության մեջ ընդունելությունը վերսկսելու մասին»:

*Այժմ, յերբ կուսակցական փաստաթղթերի ստուգման հետևանքով կարգ ու կանոն է մտցված մեր կուսակցական տան մեջ և կուսակցական կազմակերպությունները մաքրվել են խորթ մարդկանցից, հնարավորություն կա բաց անել մուտքը Համկոմկուսի (բ) շարքերն ընդունելու համար:*

*Վերսկսելով ընդունելությունը կուսակցության մեջ, Համկոմկուսի (բ) Կենտկոմի պլենումը մի անգամ ևս նախազգուշացնում է բոլոր կուսակցական կազմակերպություններին, վոր ընդունելությունը կարող է կատարվել միայն խիստ անհատական կարգով, վոր կուսակցության մեջ խմբերով ընդունելը չի կարող թույլ տրվել և վոչ մի պայմանով, վոր Համկոմկուսի (բ) յուրաքանչյուր նոր անդամ ընդունելիս, անհրաժեշտ է ամենախիստ կերպով պահպանել կուսակցության կանոնադրությունը և հաշվի առնելով կուսփաստաթղթերի ստուգման ընթացքում հայտնաբերված սխալները, թույլ չտալ, վոր կուսակցական շարքերը կեղտոտվեն պատահական մարդկանցով:*

*Կուսակցական կազմակերպությունները պետք է ներգրավեն կուսակցության մեջ իսկապես առաջավոր, բանվոր դասակարգի գործին նվիրված, մեր յերկրի արժանավոր և լավագույն մարդկանց: Այդ խնդիրն առավել ևս իրագործելի յե, վոր վերջին յերեք տարում կուսակցության մեջ ընդունելությունը դադարեցվելու մոմենտից, Համկոմկուսի (բ) շուրջն աճել են մեր կուսակցությանն անսահմանորեն նվիրված, գործնականում ստուգված «վոչ կուսակցական բոլշևիկների» նոր կադրեր, ինչպես բանվորների, այնպես էլ կոլտնտեսականների ու աշխատավոր ինտելիգենցիայի մեջ:*

*Միայն այս բոլոր պայմանները պահպանելու դեպքում, յերբ կուսակցության նոր անդամների ընդունե*

յության գործը դրված կլինի, վորպես կուսակցական ամենապատասխանատու խնդիրներից մեկը, ավելի ևս կամրանան Համկոմկուսի (բ) շարքերը և կամրանան կուսակցության կապերը մասսաների հետ:

Համկոմկուսի (բ) Կենտկոմի Պլենումը վորոշում է.

1. Վորովհետև կուսփաստաթղթերի ստուգումը դեռ լրիվին չի ավարտվել և առայժմ կարողացել է ընդգրկել կուսակցության անդամների 93 տոկոսն ու թեկնածուների 53 տոկոսը — կուսակցական փաստաթղթերի ստուգումը տերիտորիալ, զինվորական, տրանսպորտային և այլ կուսակցական կազմակերպություններում՝ ամբողջ կուսակցության մեջ ավարտել մինչև 1936 թվի փետրվարի մեկը:

Պարտավորեցնել մարզկոմներին, յերկոմներին և ազգային կոմկուսակցությունների կենտկոմներին՝ մինչեվ 1936 թվի հունվարի 15-ը՝

ա) մարզկոմների, յերկոմների ու ազգային կոմկուսակցությունների կենտկոմների բյուրոներում քննության առնել այն սխալներն ու անճշտությունները, վորոնք հայտնաբերվել են Համկոմկուսի (բ) Կենտկոմի կողմից տեղական կուսկազմակերպությունների ներկայացրած կուսփաստաթղթերի ստուգման բոլոր ակտերը նայելիս, և ուղղված տվյալները լրացուցիչ ակտերի ձևով հաղորդել Համկոմկուսի (բ) Կենտկոմին:

բ) հրավիրել մարզկոմների, յերկոմների ու ազգային կոմկուսակցությունների կենտկոմների պլենումներ, վորտեղ քննության առնել ամբողջ կազմակերպության կուսփաստաթղթերի ստուգման արդյունքները (բացառությամբ այն մարզային, յերկրային ու հանրապետական կուսակցական կազմակերպությունների, վորտեղ պլենումներ արդեն տեղի յեն ունեցել և հաշվետվությունները ներկայացվել են Համկոմկուսի (բ) Կենտկոմին).



գ) Համկոմկուսի (բ) Կենտկոմի հաստատությանը ներկայացնել կուսփաստաթղթերի ստուգման արդյունքների մասին վերջնական հաշվետվություններն ամբողջ կուսկազմակերպության նկատմամբ, հաշվետվություններ կուսակցության անդամների ու թեկնածուների քանակի մասին՝ հաշվի առնելով այդ փոփոխությունները, վոր տեղի յեն ունեցել ստուգման ժամանակ և պլենումների համապատասխան բանաձևերը:

2. 1936 թվի փետրվարի 1-ից մինչև մայիսի մեկը կատարել կուսակցության բոլոր անդամների ու թեկնածուների կուսակցական փաստաթղթերի փոխանակում:

Փոխանակման յենթակա պետք է լինեն.

ա) 1926 թվի հին ձևի կուսակցական տոմսերը՝ նոր կուստոմսերով՝ առանց բացառության բոլոր՝ ինչպես 1933 թվին կուսակցության զտումն անցած, այնպես և չանցած կուսակցական կազմակերպություններում.

բ) թեկնածուական քարտերը՝ Միության բոլոր կուսակցական կազմակերպությունների համար սահմանելով միասնական ձևի թեկնածուական քարտեր.

գ) կուսակցության բոլոր անդամների ու թեկնածուների հաշվառման հին քարտերը՝ նորերով:

3. Կուսակցական տոմսերի, թեկնածուական քարտերի ու հաշվառման քարտերի փոխանակումը կատարել խիստ անհատական կարգով այնպես, վոր փոխանակման հետևանքով որինակելիորեն դրվի կոմունիստների հաշվառման և ուսումնասիրման ամբողջ գործը: Ըստ այնմ նկատի պետք է ունենալ, վոր կուսակցական տոմսերը փոխանակելիս կուսակցական կազմակերպությունները կուսակցության անդամներից վոմանց կարող են և չտալ կուսակցական տոմս, թեկուզ և անցած լինի կուսակցական փաստաթղթերի ստուգումը, յեթե կուսակցության այդ անդամները

չեն արդարացնում կուսակցության անդամի բարձր կոչումը: Եթե կուսակցական փաստաթղթերի ստուգման ժամանակ կուսակցական կազմակերպությունները հիմնական ուշադրությունը կենտրոնացրել եյին այն բանի վրա, վորպեսզի մերկացնեն խաբեբայության ճանապարհով Համկոմկուսի (բ) շարքերը խցկված՝ կուսակցության թշնամիներին, ամեն տեսակի պատահական մարդկանց ու ժուլիկներին, ապա փոխանակման ժամանակ հիմնական ուշադրությունն անհրաժեշտ է դարձնել այն բանի վրա, վորպեսզի ազատվել պասսիվ, կուսակցության անդամի բարձր կոչումը չարդարացնող, պատահականորեն Համկոմկուսի (բ) շարքերն ընկած մարդկանցից:

4. Սահմանել կուսակցական տոմսերի և կուսակցական այլ փաստաթղթերի փոխանակման հետևյալ կարգը.

ա) կուսակցական տոմսերի և կուսակցական այլ փաստաթղթերի փոխանակման գործնական ղեկավարությունը դրվում է մարզկոմների, յերկկոմների և ազգային կոմկուսակցությունների կենտկոմների քարտուղարների և ղեկավար կուսօրգանների բաժինների վարիչների վրա, վորոնք Համկոմկուսի (բ) Կենտկոմի առաջ անձնապես պատասխանատու յեն այդ աշխատանքն որինակելիորեն անցկացնելու համար:

Կուստոմսերն ու թեկնածուական քարտերը ճիշտ կերպով տալու համար Համկոմկուսի (բ) Կենտկոմի, յերկկոմների, մարզկոմների և ազգային կոմկուսակցությունների կենտկոմների առաջ անմիջական պատասխանատվություն են կրում անձնապես քաղկոմների ու շրջկոմների քարտուղարները:

Այն քաղաքներում, վորտեղ կան քաղկոմներին յենթակա շրջկոմներ, փոխանակում կատարելու և կուսակցական նոր տոմսեր տալու համար շրջկոմների քարտուղարները պատասխանատու յեն նաև քաղկոմների առաջ.



բ) կուսակցական տոմսերի փոխանակումն անմիջականորեն կատարում են շրջկոմների քարտուղարները:

Շրջանային կուսակցական այն կազմակերպություններում, վորոնք ունեն կուսակցության 2000-ից ավելի անդամ և թեկնածու, թույլ տալ կուստոմսերի փոխանակմանը մասնակցելու նաև շրջկոմի բյուրոյի մյուս անդամներին՝ մարզային (յերկրային) կազմակերպության առաջին քարտուղարի անհատական հաստատմամբ: Այս դեպքում նրանք կատարում են միայն ամբողջ նախնական աշխատանքը (զրուցում են կուսակցության անդամների հետ, լրացնում են հաշվառման և հաշվետվության քարտերը և այլն), իսկ կուստոմսերի հանձնումը կատարում են միայն շրջկոմների առաջին քարտուղարները:

գ) յերկաթուղային, ջրային և այլ տեսակի տրանսպորտի կուսակցական կազմակերպություններում կուսակցական տոմսերի փոխանակումը պետք է կատարեն այն շրջկոմների ու քաղկոմների քարտուղարները, վորոնց տերիտորիայում գտնվում է համապատասխան յերկաթուղային կուսակցական կազմակերպությունը, իսկ քաղբաժինների պետերը կատարում են միայն վողջ անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքը.

դ) ԲԳԿԲ և Ներքգործժողկոմատի զորքերի կուսակցական կազմակերպություններում կուսակցական տոմսերի փոխանակումը կատարում է համապատասխան քաղբաժնի պետը, վորն անց է կացրել և անձնապես պատասխանատու յե Համկոմկուսի (բ) Կենտկոմի առաջ կուսակցական փաստաթղթերի ստուգման համար:

5. Կուսակցական նոր տոմսերի ու թեկնածուական քարտերի մաքուր բլանկները, ինչպես և հաշվառման փաստաթղթերը տրվում են անմիջականորեն Համկոմկուսի (բ) Կենտրոնական Կոմիտեյի կողմից մարզ

միայն անհատական կարգով, ընդունվողների անհատական մանրակրկիտ ընտրությամբ: Խմբերով ընդունելը պետք է անպայման հանվի կուսակցական պրակտիկայից, որպես կուսակցության համար միանգամայն անթույլատրելի և վնասակար մեթոդ:

Սակայն Համկոմկուսի (բ) Կենտկոմի Պլենումը հնարավոր է համարում, ժամանակավորապես թույլ տալ կուսակցության անդամ ու թեկնածու ընդունել այն առանձին կուսակցական կազմակերպություններին, որոնք ըստ իրենց ընդհանուր վիճակի և ամբողջ աշխատանքի մակարդակի դեռևս բավականաչափ պատրաստված չեն, որպեսզի բոլշևիկորեն իրագործեն կուսակցության մեջ նոր անդամների ընդունումը, նրանց դաստիարակումը և օգտագործումը:

Կուսակցության մեջ ընդունելը ժամանակավորապես արգելելու հարցն առանձին մարզային, յերկրային կամ հանրապետական ամբողջ կազմակերպության վերաբերմամբ պետք է վճռվի Համկոմկուսի(բ) Կենտկոմում, իսկ առանձին շրջանային կամ օկրուգային կուսակցական կազմակերպության վերաբերմամբ՝ մարզկոմներում, յերկոմներում և ազգային կոմկուսների կենտկոմներում Համկոմկուսի (բ) Կենտկոմի հաստատմամբ:

9. Կուսակցության մեջ ընդունելու ամբողջ աշխատանքում կուսակցական կազմակերպությունները պետք է ամենալուրջ ուշադրություն դարձնեն համակրողների խմբակներին, որպես կարևորագույն ռեզերվ Համկոմկուսի (բ) շարքերը լրացնելու համար: Անհրաժեշտ է ամենակարճ ժամկետում վերացնել համակրողների մեջ տարվող աշխատանքի թերությունները, իսկ յերբեմն նաև այդ աշխատանքը մոռացության տալը: Կուսակցական կազմակերպություններն առաջին հերթին պետք է ուղղեն միանգամայն անհանդուրժելի այն դրությունը, յերբ համակրողների մեջ տարվող աշխատանքը լավագույն դեպքում հանգեց-



նում են քաղգրագիտության խմբակներում նրանց ընդգրկելուն և յերբ իրենք՝ սկզբնական ու շրջանային կազմակերպությունների ղեկավարները բոլորովին կապված չեն համակրողների հետ, չեն ճանաչում նրանց և նրանց մեջ չեն աշխատում:

Որպեսզի համակրողների թվից Համկոմկուսի (բ) շարքերը մտնեն լավագույնները, կուսկազմակերպությունները պետք է համակրողներ հավաքագրեն խիստ անհատական կարգով, ներգրավեն նրանց, համապատասխան կուսակցության կանոնադրության պահանջների առանձին հանձնարարությունների կատարմանը, նրանց տեղեկացնեն և բացատրեն կուսակցության ու կառավարության կարևորագույն որոշումները, քաղաքական լուրջ աշխատանք կազմակերպեն համակրողների մեջ և դարբնեն նրանցում բոլշևիկյան կազմակերպվածության ու կարգապահության ունակությունները:

10. Դիտելով Համլենկոմյերիտմիության կազմակերպությունը որպես ամենալուրջ ռեզերվ Համկոմկուսի (բ) շարքերի լրացման համար, Համկոմկուսի (բ) Կենտկոմի Պլենումը միևնույն ժամանակ վճռականորեն դատապարտում է տեղերում ստեղծված այն պրակտիկան, յերբ Համկոմկուսի (բ) մեջ կոմյերիտականներին ընդունելիս կուսակցության կանոնադրությունը խախտվում է: Կուսփաստաթղթերն ստուգելիս կուսակցական կազմակերպություններում հայտնաբերվել են Համկոմկուսի (բ) մեջ կոմյերիտականներին կամպանիական, մեքենայական ընդունելության բազմաթիվ փաստեր, նրանց հանդիսավոր կերպով հանձնելով կոմյերիտմիությունից կուսակցությանը, հաճախ այս կամ այն տարեդարձի տոնի առթիվ և այլն: Դա բոլշևիկյան պրակտիկա չէ և շուռ է տալիս մեր կուսակցության կանոնադրությունը, որի մեջ միանգամայն ճշգրիտ կերպով ասված է, թե ինչ պայմաններով են ընդունվում Համլենկոմյե-

միայն անհատական կարգով, ընդունվողների անհատական մանրակրկիտ ընտրությամբ: Խմբերով ընդունելը պետք է անպայման հանվի կուսակցական պրակտիկայից, որպես կուսակցության համար միանգամայն անթույլատրելի և վնասակար մեթոդ:

Սակայն Համկոմկուսի (բ) Կենտկոմի Պլենումը հնարավոր է համարում, ժամանակավորապես թույլ չտալ կուսակցության անդամ ու թեկնածու ընդունել այն առանձին կուսակցական կազմակերպություններին, որոնք ըստ իրենց ընդհանուր վիճակի և ամբողջ աշխատանքի մակարդակի դեռևս բավականաչափ պատրաստված չեն, որպեսզի բոլշևիկորեն իրագործեն կուսակցության մեջ նոր անդամների ընդունումը, նրանց դաստիարակումը և օգտագործումը:

Կուսակցության մեջ ընդունելը ժամանակավորապես արգելելու հարցն առանձին մարզային, երկրային կամ հանրապետական ամբողջ կազմակերպության վերաբերմամբ պետք է վճռվի Համկոմկուսի(բ) Կենտկոմում, իսկ առանձին շրջանային կամ օկրուգային կուսակցական կազմակերպության վերաբերմամբ՝ մարզկոմներում, երկկոմներում և ազգային կոմկուսների կենտկոմներում Համկոմկուսի (բ) Կենտկոմի հաստատմամբ:

9. Կուսակցության մեջ ընդունելու ամբողջ աշխատանքում կուսակցական կազմակերպությունները պետք է ամենալուրջ ուշադրությունը դարձնեն համակրողների խմբակներին, որպես կարևորագույն ռեզերվ Համկոմկուսի (բ) շարքերը լրացնելու համար: Անհրաժեշտ է ամենակարճ ժամկետում վերացնել համակրողների մեջ տարվող աշխատանքի թերությունները, իսկ երբեմն նաև այդ աշխատանքը մոռացության տալը: Կուսակցական կազմակերպություններն առաջին հերթին պետք է ուղղեն միանգամայն անհանդուրժելի այն դրությունը, երբ համակրողների մեջ տարվող աշխատանքը լավագույն դեպքում հանգեց-



նում են քաղգրագիտության խմբակներում նրանց ընդգրկելուն և երբ իրենք՝ սկզբնական ու շրջանային կազմակերպությունների ղեկավարները բոլորովին կապված չեն համակրողների հետ, չեն ճանաչում նրանց և նրանց մեջ չեն աշխատում:

Որպեսզի համակրողների թվից Համկոմկուսի (բ) շարքերը մտնեն լավագույնները, կուսկազմակերպությունները պետք է համակրողներ հավաքագրեն խիստ անհատական կարգով, ներգրավեն նրանց, համապատասխան կուսակցության կանոնադրության պահանջների առանձին հանձնարարությունների կատարմանը, նրանց տեղեկացնեն և բացատրեն կուսակցության ու կառավարության կարևորագույն որոշումները, քաղաքական լուրջ աշխատանք կազմակերպեն համակրողների մեջ և դարբնեն նրանցում բոլշևիկյան կազմակերպվածության ու կարգապահության ունակությունները:

10. Դիտելով Համլենկոմյերիտմիության կազմակերպությունը որպես ամենալուրջ ռեզերվ Համկոմկուսի (բ) շարքերի լրացման համար, Համկոմկուսի (բ) Կենտկոմի Պլենումը միևնույն ժամանակ վճռականորեն դատապարտում է տեղերում ստեղծված այն պրակտիկան, երբ Համկոմկուսի (բ) մեջ կոմյերիտականներին ընդունելիս կուսակցության կանոնադրությունը խախտվում է: Կուսփաստաթղթերն ստուգելիս կուսակցական կազմակերպություններում հայտնաբերվել են Համկոմկուսի (բ) մեջ կոմյերիտականներին կամպանիական, մեքենայական ընդունելության բազմաթիվ փաստեր, նրանց հանդիսավոր կերպով հանձնելով կոմյերիտմիությունից կուսակցությանը, հաճախ այս կամ այն տարեդարձի առթիվ և այլն: Դա բոլշևիկյան պրակտիկա չէ և չու է տալիս մեր կուսակցության կանոնադրությունը, որի մեջ միանգամայն ճշգրիտ կերպով ասված է, թե ինչ պայմաններով են ընդունվում Համլենկոմյե-

րիտմիության անդամները Համկոմկուսի (բ) մեջ:

Ընդունելով այն բոլոր առավելությունները, վոր տալիս է Համլենինկոմյերիտմիության անդամին՝ կուսակցության մեջ մտնելիս նրա կոմյերիտմիության շարքերում գտնվելը, Համկոմկուսի (բ) Կենտկոմի Պլենումն այնուամենայնիվ սխալ է համարում, յերբ մի քանի կուսակցական և կոմյերիտական կազմակերպություններ հարց են դնում կոմյերիտականներին մասսայաբար կուսակցության մեջ ընդունելու մասին, այդ գործը կապելով կոմյերիտմիության մեջ մեծ քանակությամբ այսպես կոչված մեծահասակների առկայության հետ: Կուսակցական և կոմյերիտական կազմակերպությունները փոխարինելով կուսակցության համար անհատական ընտրություն կատարելու սկզբունքը տարիքի սկզբունքով, ճիշտ չեն դաստիարակում իրենց կոմյերիտականներին, նրանց մեջ այնպիսի տրամադրություն ստեղծելով, վոր յեթե նրանց կուսակցության մեջ չեն ընդունում մինչև վորոշ հասակի հասնելը, նշանակում է նրանք հետ են մղվող քաղաքական ակտիվ կյանքից: Այդպիսի դրույթը միանգամայն սխալ է: Վորոշ հասակի հասած (մեծահասակ) ամեն մի կոմյերիտական չէ, վոր կարող է և պիտի ընդունվի Համկոմկուսի (բ) մեջ: Կուսակցության համար ընտրվում են միայն ամենից ավելի արժանավոր, ստուգված մարդիկ, և ամեն մի կոմյերիտական հնարավորություն ունի Համկոմկուսի (բ) շարքերը մտնելու, սոցիալիստական շինարարության մասնակցելու, իր գաղափարական մակարդակը և բոլշևիկյան կոփվածությունը բարձրացնելու միջոցով, սերտորեն կապելով իր աշխատանքը կուսակցական կազմակերպության հետ:

11. Այնպիսի կարգ սահմանել, վոր կուսակցության մեջ նոր ընդունվածներին կուսակցական տոմսը կամ թեկնածուական քարտը հանձնվում են անմիջականորեն շրջկոմում, շրջկոմի քարտուղարի կողմից: Այդ միջոցը, զուգակցած այն բանի հետ, վոր շրջկոմի քարտուղարը նախապես կճանաչի կուսակցության մեջ ընդունվողին, հնարավորություն կտա նրան կուսակցության մեջ ընդունելու հետ միաժամանակ ճիշտ լուծել կուսակցության նոր անդամին կամ թեկնածուին ոգտագործելու հարցը՝ կուսակցական առաջադրությունների համար վոչ թե այսպես կոչված կուսբեռնավորումները ձևականորեն կատարելու կարգով, այլ համապատասխան նրա ընդունակությունների և այն խնդիրների, վոր կանգնած են տվյալ կուսկազմակերպության առաջ:

Համկոմկուսի (բ) Կենտկոմի Պլենումը վճռականորեն դատապարտում է կուսակցական շատ կազմակերպություններում գոյություն ունեցող այն պրակտիկան, յերբ կուսակցության նոր անդամներ կամ թեկնածուներ ընդունելուց հետո նրանց մասին մոռացել են, հոգածություն չցուցաբերելով յերիտասարդների մասին, դեռևս վոչ բավականաչափ կազմակերպված և բոլշևիկյան կազմակերպվածության բոլոր տրադիցիաները չյուրացրած կուսանդամների մասին:

Անհրաժեշտ է հասնել այն դրության, վոր իր կուսակցական կազմակերպության ղեկավարությամբ ու ոգնությամբ, կուսակցության յուրաքանչյուր նոր թեկնածու և անդամ իսկույն զգա անկուսակցականությունից բոլշևիկյան կազմակերպվածության անցնելու ամբողջ պատասխանատվությունը և համակվի շրջապատող մասսաների առջև կուսակցության գործի համար իր կրած պատասխանատվության գիտակցությամբ:

***

Նկատի առնելով, վոր 1933 թվին սկսած կուսզտումով ընդգրկվել են հիմնական մարզերը, իսկ կուսփաստաթղթերի ստուգումը մնացած մարզերում ևս ապահովել է 1933 թ. զտման առաջ դրված խնդիրնե-

րի լուծումը, — Համկոմկուսի (բ) Կենտկոմի Պլենումը վորոշում ե.

ա) Կուսակցության զտումն ավարտված համարել և զտում չկատարել այն մարզերում, ուր նա տեղի չի ունեցել.

բ) Համկոմկուսի (բ) Կենտկոմի 1933 թվի մայիսի 10-ի վորոշմամբ կազմակերպված՝ Համկոմկուսի (բ) շարքերի զտման Կենտրոնական Հանձնաժողովի աշխատանքը համարել ավարտված:

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴ.
Гос. Пуб. Библиотека
ՀՍՍՀ-ССР
им. А. Мясникян
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆ.



ՀՀ Ազգային գրադարան
NL0183721

134

Գինը 12 կոպ.

# РЕЗОЛЮЦИИ
## ПЛЕНУМА ЦК ВКП (б)

21—25 декабря 1935 г

АЗПАРТИЗДАТ
БАКУ — 1936 —